10.56653/18290361-2025.15-19

Արուսյակ Ղազարյան
Հայաստանի պատմության թանգարան
ghazaryana.historymuseum@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԴԱՐԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ*

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, մշտական ցուցադրություններ, ժամանակավոր ցուցադրություններ, շրջիկ ցուցահանդեսներ, ճարտարապետության բաժին, ցուցադրության բաժին

Ներածություն

Հայաստանի պատմության թանգարանը երկրի կարևորագույն մշակութային հաստատություններից է, որը ներկայացնում է հայ ժողովրդի բազմադարյա պատմությունն ու ժառանգությունը և արդեն 105 տարի է, ինչ իրականացնում է պատմական ժառանգության հավաքման, պահպանման, ուսումնասիրության, ցուցադրման և հանրահռչակման կարևոր առաքելությունը:

Այս հոդվածի նպատակն է ներկայացնել Հայաստանի պատմության թանգարանի կողմից արդեն մեկ դար և ավելի իրականացվող ցուցադրական ավանդույթները, ինչպես նաև անդրադառնալ տեղական և միջազգային հարթակներում թանգարանի հավաքածուի ցուցադրման ազգային, գիտական և կրթական նշանակությանը: Հոդվածում կքննարկվեն թանգարանի կողմից կազմակերպված կարևորագույն ցուցադրությունները, դրանց զարգացման միտումներն ու ազդեցությունները:

Հայաստանի պատմության թանգարանի ցուցադրական ավանդույթների պատմական ուղին

Հայաստանի պատմության թանգարանը հիմնադրվել է 1919 թ. սեպտեմբերի 9-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի թիվ 439 օրենքով: Սկզբնապես այն կոչվել է Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան, սակայն հետագա տարիներին ենթարկվել է կառուցվածքային և անվանական փոփոխությունների:

Դեռևս 1921 թվականին Լուսժողկոմի հոկտեմբերի 19-ի հրամանով ստեղծվեց Հնությունների և գեղարվեստի պահպանության կոմիտե, որի առջև խնդիր դրվեց պետական թանգարանի համար նյութեր հավաքել ու թանգարանային արժեքները մեկ տեղում կենտրոնացնել (Ղաֆադարյան 1974, 39): Նույն թվականին ազգագրագետ, հնագետ Երվանդ Լալայանը Թիֆլիսից Երևան տեղափոխեց Հայոց

* Ստացվել է 03.02.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 20.02.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

ազգագրական ընկերության թանգարանի առարկաները, հնագետ Աշխարհբեկ Քալանթարը՝ Վրաստանի թանգարանից Մշո Առաքելոց վանքի դուռը և այլ առարկաներ, 1922-ին՝ Մոսկվայից Հայաստան բերվեց Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Էջմիածնից Մոսկվա տեղափոխված թանգարանային իրերն ու Լազարյան ճեմարանի թանգարանային հավաքածուն, պատմաբան-բանասեր Երվանդ Շահազիզի կողմից Նոր Նախիջևան տեղափոխված ժողովածուներ և այլ նյութեր: Եթե թանգարանի գործունեության առաջին տարիներին ջանքերն առավել ուղղված էին ֆոնդերի համալրմանը, ապա Հայաստանի պատմությանն ու մշակույթին վերաբերող նյութերի հավաքմանն ու պահպանությանը զուգահեռ առաջնային դարձավ նաև դրանք ցուցադրելու խնդիրը:

Հայաստանի կենտրոնական թանգարանի անդրանիկ ցուցադրությունը տեղի ունեցավ 1925 թվականի նոյեմբերին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 5-րդ տարեդարձի շրջանակում: Չնայած այն փաստին, որ նորաբաց ցուցադրությունը չուներ ցուցադրական համապատասխան կահույք, չկար առարկաները ներկայացնելու ժամանակագրական բաժանում, թանգարանը ներկայացրեց նշյալ ժամանակահատվածում ձեռք բերված լավագույն նմուշները, ինչը մեծ հաջողություն ունեցավ այցելուների շրջանում:

1930 թ. Մոսկվայում տեղի ունեցավ թանգարանային աշխատողների առաջին համագումարը, որի շրջանակում քննվեցին միութենական թանգարաններում թանգարանային գործին վերաբերող տարբեր հարցեր: Համագումարին հաջորդեց 1931 թ. ՀԽՍՀ Լուսժողկոմատի կոլեգիան, որի շրջանակում, ի թիվս այլ հարցերի, առաջարկվեց վերափոխել և համակարգել Հայաստանի կենտրոնական թանգարանի աշխատանքները (Ղաֆադարյան, 1974, 43): Վերջինիս ընդունած որոշումների արդյունքում թանգարանը վերանվանվեց Հայաստանի պետական կուլտուր-պատմական թանգարան, ինչպես նաև որոշվեց թանգարանի բոլոր բաժիններում ցուցադրությունները կազմակերպել ըստ հասարակական ֆորմացիաների: 1931 թ. թանգարանը սկսեց նախապատրաստել նոր ցուցադրություն, որում պետք է ներկայացվեին հասարակական բոլոր կացութաձևերը: Այստեղ դժվարությունը ոչ միայն այն էր, որ առաջին անգամ ցուցադրվելու էին պատմական դարաշրջաններն իրենց բնորոշ գծերով, այլև այն, որ թանգարանը մինչ այդ նյութերի հավաքագրման առումով համակարգված աշխատանք չէր տարել և որոշ դարաշրջաններին վերաբերող նյութեր չկային: Այդ բացը լրացվեց նաև միութենական գործընկեր թանգարանների օգնությամբ, որոնք որոշ դեպքում տվյալ ժամանակաշրջանին բնորոշ նյութերի կրկնօրինակներ էին տրամադրում, իսկ հետագա տարիներին արդեն ցուցադրությունը ամբողջացվեց նոր պեղումների և ազգագրական գիտարշավների նյութերով:

Ցուցադրությունների կազմակերպման աշխատանքները առավել համակարգված դարձնելու համատեքստում կարևոր քայլ էր 1930 թ. մարտի 18-ի թիվ 11 հրամանով Պետական թանգարանում Ճարտարապետության բաժնի ստեղծումը, որի առաջին վարիչ նշանակվեց ճարտարապետ Թորոս Թորամանյանը (Հրամանագիրք 1930, 3): Բաժինն ըստ էության դարձավ թանգարանի ներկայիս ցուցադրությունների կազմակերպման բաժնի նախահիմքը:

Մինչև 1980-ական թվականները ճարտարապետության բաժինը գործել է գրեթե նույն անվանմամբ, ընթացքում երբեմն վերածվելով կաբինետի, այնուհետև կրկին՝ բաժնի: Ճարտարապետության բաժնի անմիջական մասնակցությամբ 1939 թվականին կազմակերպվեց Խորհրդային Միությունում այդ ժամանակահատվածի խոշորագույն ցուցահանդեսներից մեկը՝ «Սասունցի Դավիթ» խորագրով: Ցուցադրությունը նվիրված էր հայկական ազգային էպոսի՝ «Սասունցի Դավթի» առաջին գիտական արձանագրման 1000-ամյակին (նկ. 1): Այս պատմական իրադարձությունը նշանավորվեց Հայաստանի մշակութային կյանքում մեծ արձագանք ստացած ցուցադրությամբ, որտեղ ներկայացված էին հնագիտական, ազգագրական և գեղանկարչական արժեքավոր նմուշներ՝ ընդգծելով ոչ միայն էպոսի պատմական ու ազգային կարևորությունը, այլև իր ժամանակաշրջանի հայկական միջնադարյան բարձր մշակույթը: Նույն թվականին թանգարանում կազմակերպվեց նաև «Հայկական ձեռարվեստ» ժամանակավոր ցուցահանդեսը, որտեղ ներկայացվեցին արվեստի բացառիկ նմուշներ:

Ճարտարապետության բաժնի հիմնադրման օրից բաժնի առաջ դրված են եղել մի շարք աշխատանքային գործառույթներ, մասնավորապես՝ ցուցահանդեսային աշխատանքների իրականացում, մասնակցություն հնագիտական պեղումների, վերականգնման և կառուցողական աշխատանքներ թանգարանում, կամերալ աշխատանքներ:

1946 թ., երբ մեկնարկեցին Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի հնագիտական կանոնավոր պեղումները, Հայաստանի պատմության թանգարանի ճարտարապետության բաժնի վարիչ Գրիգոր Քոչոյանը մասնակցեց պեղումներին՝ որպես արշավախմբի պետի տեղակալ և ճարտարապետ: Վերջինս ղեկավարել է բաժինը ավելի քան երկու տասնամյակ՝ 1942–1968 թթ.: Նրա ղեկավարությամբ բաժինը իրականացնում էր կամերալ աշխատանքներ, որոնք ներառում էին պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերի ճարտարապետական չափագրություններ, վերակազմություններ, ջրաներկով և գրչանկարչությամբ նկարներ՝ թանգարանի ցուցասրահներում և ֆոնդերում պահվող արժեքավոր խեցեղենի, հախճապակու, ապակյա, ոսկյա, արծաթե, բրոնզե առարկաների ու զարդերի՝ ինչպես բնական մեծությամբ, այդպես էլ պահանջվող տարբեր մասշտաբների ուսումնասիրությունների կամ հետագայում ալբոմների հրատարակությունների համար: Դվինի երկարաժամկետ պեղումների արդյունքում թանգարանի միջնադարյան հավաքածուն զգալիորեն համալրվեց, իսկ բացառիկ նմուշների մի մասը դարձավ թանգարանի ցուցադրության անբաժանելի մաս (նկ. 2): Բացի Դվինի պեղումներից, ճարտարապետության բաժնի աշխատակիցները մասնակցել են նաև Արթիկի և Էլարի, Աղցի պեղումների չափագրման, մաքրագծման և մասնակի վերակազմության աշխատանքներին:

1956 թ., երբ Հարություն Մնացականյանի ղեկավարությամբ մեկնարկեցին Լճաշենի բնակավայրի լայնածավալ պեղումները, դրանցում ներգրավվեցին նաև ճարտարապետության բաժնի մասնագետները՝ ապահովելով հնագիտական նյութերի ճշգրիտ չափագրումն ու վերակազմությունը: Այս գործընթացները մեծապես նպաստեցին ոչ միայն տվյալ հնավայրի, այլև ընդհանրապես Հայաստանի հնա-

գիտական ժառանգության գիտական հետազոտմանն ու հանրայնացմանը:

1947 թվականին իրականացվեց հերթական լայնածավալ ցուցահանդեսը, որը նվիրված էր Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 30-ամյակին:

Ճարտարապետության բաժնի վարիչ Գրիգոր Քոչոյանը իր հաշվետվության մեջ արձանագրում է. «Կառավարության որոշմամբ հոկտեմբերյան Մեծ Ռեվոլուցիայի 30-ամյակի կապակցությամբ թանգարանում կազմակերպվեց ցուցահանդեսային աշխատանքները, որը տևեց մի տարուց ավելի, բաժնի աշխատակիցները ակտիվորեն մասնակցեցին ինչպես հին ցուցադրության նյութերի հավաքման ու դասավորման, այնպես էլ նոր ցուցադրության համար պահանջվող տեխնիկական և ձևավորման բոլոր աշխատանքներին, աշխատելով մինչև ուշ գիշեր թանգարանի դիրեկտոր Կ. Ղաֆադարյանի գլխավորությամբ, ապահովելով ցուցահանդեսի բացումը նշված ժամկետներում» (Պլան և հաշվետվություն 1947, 3):

1953 թ., թանգարանների միավորման, շենքային տարածքների ընդլայնման և Կուլտուրայի նախարարությանը ենթարկվելու գործընթացի շրջանակում, մեկնարկեցին նոր մշտական ցուցադրության նախագծման աշխատանքները: Գր. Քոչոյանը իր 1954 թվականի հաշվետվությունում գրում է. «Թանգարանի երկրորդ հարկում մինչև 1953 թվականի վերջը գոյություն ունեցած ցուցահանդեսի փակումից հետո, առաջին հարկում սկսեցին կազմակերպվել պատմական ցուցահանդեսի ձևավորման աշխատանքները: Այդ աշխատանքներով սկիզբ դրվեց Հայաստանում ունենալու ընդարձակ պատմական մշտական ցուցադրություն, որպիսին չի ունեցել թանգարանն իր անցյալում» (Ճարտարապետության բաժնի աշվետվություն 1954, 6): Մեկ տարի անց արդեն թանգարանի առաջին հարկում կազմակերպվում է նախնադարյան համայնական հասարակարգից մինչև 13-րդ ժամանակահատվածը, հաջորդող տարիներին 2-րդ հարկում՝ 16–18-րդ դդ, 3-րդ հարկում՝ 1905–1907 թթ. Ռեվոլյուցիայի ցուցադրությունը: 1956 թ. Անի մայրաքաղաքին նվիրված ցուցասրահի վերաբացման շրջանակում այցելուները առաջին անգամ հնարավորություն ստացան տեսնելու քաղաքի մեծածավալ մանրակերտը, որն արտացոլում էր միջնադարյան Հայաստանի կարևորագույն քաղաքական, մշակութային և տնտեսական կենտրոնի ճարտարապետական պատկերը: Մինչ այդ, Անիին նվիրված ցուցասրահում դեռևս 1940-ական թվականներից ցուցադրված էր քաղաքի ավելի փոքր չափսերով մանրակերտը: Այն, սակայն, չէր կարող համեմատվել 1956 թվականին ներկայացված մեծածավալ մանրակերտի հետ, որն ավելի մանրամասն և ճշգրիտ ներկայացրեց Անիի քաղաքային համալիրը:

1959 թ. Զվարթնոցի համար նախատեսված ցուցասրահում տեղադրվեց 7-րդ դարի հայկական լավագույն ճարտարապետական կոթողներից մեկի՝ Զվարթնոց տաճարի մեծադիր մանրակերտը, որը ստեղծվել է Գուրգեն Արևշատյանի կողմից՝ ճարտարապետ Գրիգոր Քոչոյանի կատարած ամբողջական չափագրումների, աշխատանքային գծագրերի հիման վրա՝ նրա անմիջական ղեկավարությամբ: Մանրակերտի վերականգնման սկզբունքները հիմնված էին ճարտարապետ Թորոս Թորամանյանի գիտական վերակազմության վրա. այն հավաքվել է մոտ 4000 մանր կտորներից (Ճարտարապետության բաժնի հաշվետվություններ 1958, 8):

1961 թվականին արդեն Պատմական թանգարանի 20 մշտական ցուցասրահներում ներկայացված էին հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին վերաբերող արժեքավոր նմուշներ, որոնք ընդգրկում էին նախնադարյան համայնական հասարակարգից մինչև 19-րդ դարի վերջն ընկած ժամանակաշրջանը: Այդ ժամանակահատվածում թանգարանի ֆոնդերում պահվում էր շուրջ 150.000 առարկա, որոնցից շուրջ 6000 արժեքավոր նմուշ ցուցադրված էին հիմնական ցուցադրությունում (Ուղեցույց 1961, 6) (նկ. 3):

1962 թ. թանգարանը նախաձեռնեց շրջիկ ցուցահանդեսի ձևավորման աշխատանքները, որոնք նպատակ ունեին հանրահռչակելու հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը ավելի լայն լսարանի շրջանում: Ցուցահանդեսի համար ստեղծվեցին շուրջ 80 վահաններ, որոնց վրա համառոտ, սակայն հիմնավոր կերպով ներկայացված էին հայոց պատմության և մշակույթի հիմնական փուլերը՝ հիմնված թանգարանի մշտական ցուցադրության բովանդակության վրա: Շրջիկ ցուցահանդեսը ներկայացվեց Երևանի և մարզային հանրակրթական դպրոցներում, թատրոնների, կինոթատրոնների, համերգասրահների ճեմասրահներում, մշակույթի պալատներում, գործարաններում և այլ հասարակական վայրերում, ինչը զգալիորեն ընդլայնեց թանգարանի կրթական առաքելության շրջանակները: Ամեն տարի տասնյակ հազարավոր այցելուներ հնարավորություն էին ստանում ծանոթանալու ազգային մշակութային ժառանգությանը՝ թանգարան այցելելու անհրաժեշտությունից անկախ: Ձարգացնելով շրջիկ ցուցադրությունների պրակտիկան՝ 1977 թ. թանգարանի կողմից մշակվեց ևս մեկ շրջիկ ցուցահանդես՝ նվիրված Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության 60-ամյակին, որը շուրջ 2 ամսվա ընթացքում դիտեց ավելի քան կես միլիոն այցելու (Հաշվետվություն 1977, 5):

1965 թ., Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի կապակցությամբ, Խորհրդային Հայաստանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր, որոնք դարձան Խորհրդային Միությունում առաջին նմանատիպ ընդվզումը՝ միտված ազգային հիշողության վերականգնմանը: Այս կարևոր իրադարձության համատեքստում, Հայաստանի պատմության թանգարանը նույնպես անմասն չմնաց երկրում ընթացող միջոցառումներից և կազմակերպեց Եղեռնի 50-ամյա տարելիցին նվիրված ժամանակավոր ցուցադրություն: Ցուցադրության նպատակն էր վեր հանել և փաստագրել 1915 թվականի ողբերգական իրադարձությունները՝ հիմնվելով պահպանված վավերագրերի, լուսանկարների, վերապրածների վկայությունների, ինչպես նաև թեմային առնչվող մշակութային և նյութական ժառանգության վրա. ներկայացված են Վանի, Ուրֆայի, Մուսա լեռան և Շապին-Գարահիսարի հայ բնակչության հերոսական պայքարը սուլթանական Թուրքիայի դեմ: Ցուցահանդեսում ներկայացված են եղել ցեղասպանությունը փաստող վավերագրական փաստաթղթեր, ինչպես նաև եղել հայ ազգային հերոսներ Անդրանիկի, Ես. Յաղուբյանի, Եկարյանի զենքերը, անձնական իրերը և այլ նյութեր (Հաշվետվություն 1977, 2):

1968 թվականին թանգարանի կողմից նախաձեռնվեց և ճարտարապետության բաժնի անմիջական մասնակցությամբ իրականացվեց մեկ այլ մեծածավալ ցուցադրություն՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին: Այն ընդգրկել է

հինգ ցուցասրահ, որտեղ ներկայացվել են Էրեբունուց և Կարմիր Բլուրից հայտնաբերված խեցեղեն, սեպագիր արձանագրություններ, որմնանկարներ, զենքեր, զարդեր և այլն (Հաշվետվություն 1968, 2):

Թանգարանի ցուցադրական աշխատանքները, որոնք մեծ թափ էին ստացել, սկսեցին ընդլայնվել՝ դուրս գալով նաև Հայաստանի սահմաններից: Մշակութային ժառանգության հանրահռչակման նպատակով կազմակերպվեցին միջազգային ցուցահանդեսներ, որտեղ ներկայացվեցին հայոց պատմության և մշակույթի կարևորագույն նմուշները: 1968 թվականին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում կազմակերպվեց ժամանակավոր ցուցադրություն, որի շրջանակում թանգարանից 116 առարկա ցուցադրվեց: Ցուցահանդեսը մեծ արձագանք գտավ՝ 20 օրվա ընթացքում հյուրընկալելով ավելի քան 10.000 այցելու (Հաշվետվություն 1968, 4): 1977 թ. թանգարանը մասնակցեց Լոս Անջելեսում կազմակերպված Խորհրդային Միության ազգային ցուցահանդեսին, որտեղ ներկայացվեց 65 ցուցանմուշ, այդ թվում՝ բրոնզե արձանիկներ, ուրարտական և միջնադարյան խեցեղեն ու մետաղագործության նմուշներ, հայկական տարազներ, գորգեր և այլն:

1969 թ. թանգարանը կազմակերպեց սփյուռքահայերի նվերների ժամանակավոր ցուցահանդես, որտեղ ներկայացվեցին 19-րդ դ. վերջի – 20-րդ դ. սկզբի ազգագրական արժեքավոր նմուշներ՝ ստացված Լիբանանից, Սիրիայից, Ֆրանսիայից, Եգիպտոսից, Անգլիայից և ԱՄՆ-ից (Հաշվետվություն 1969, 2): 1976 թ. բացվեց «Հայկական տարազ» ժամանակավոր ցուցադրությունը, որի շրջանակում ներկայացվել են տարբեր ազգագրական շրջանների աշխատանքային և տոնական տարազներ: Նույն տարում կազմակերպեց նաև հայկական գորգերի ժամանակավոր ցուցահանդես՝ «Հանրապետությունում ձեռքով պատրաստված գորգերի հետագա զարգացման միջոցառումների մասին» ՀՍՍՀ Մինիստրների Սովետի 1976 թ. օգոստոսի 4-ի որոշման շրջանակում (Հաշվետվություն, 1970, 5–6):

1979 թվականին Էստոնիայի պետական ազգային թանգարանում կազմակերպվեց «Հայկական ժողովրդական արվեստը» ժամանակավոր ցուցադրությունը, որի շրջանակում ներկայացվեց թանգարանի հավաքածուից 261 առարկա՝ տարազներ, գորգեր, ասեղնագործության նմուշներ, ոսկա և արծաթա զարդեր: Շարունակելով միջազգային ցուցադրությունների շարքը՝ թանգարանը 1981 թ. իր հավաքածուից նմուշներ ներկայացրեց Մոնրեալում կազմակերպված «Մարդը և բնությունը» ցուցահանդեսում, իսկ 1985 թվականին՝ Ճապոնիայի Ցուկուբա քաղաքում անցկացված «Էքսպո-85» համաշխարհային ցուցահանդեսում, որտեղ ներկայացվեցին 110 հնագիտական և ազգագրական առարկաներ: 1989 թվականին թանգարանը մասնակցեց նաև Իտալիայի Վերոնա քաղաքում բացված «Հայկական գորգեր» ցուցահանդեսին՝ ներկայացնելով 12 գորգ, որոնք իրենց մեջ ամփոփում էին հայկական գորգագործության ավանդույթների բազմադարյա պատմությունը (Հաշվետվություն 1979, 1981, 1985, 1989):

Այս ցուցադրությունները վկայությունն են այն բանի, որ Հայաստանի պատմության թանգարանը դեռևս խորհրդային շրջանում ակտիվորեն մասնակցել է միջազգային ցուցահանդեսներին՝ ներկայացնելով հայկական մշակույթի և պատմության տարբեր դրսևորումները:

1981 թ. հաշվետվության մեջ առաջին անգամ արձանագրվում է, որ թանգարանը միացել է Թանգարանների միջազգային օրվա շրջանակում իրականացվող միջոցառումներին՝ բացելով «Հայկական դեկորատիվ արվեստը» ժամանակավոր ցուցադրությունը: Սա կարևոր հանգրվան էր թանգարանի գործունեության մեջ, քանի որ այն վկայում է միջազգային թանգարանային համայնքի հետ Հայաստանի պատմության թանգարանի ինտեգրման գործընթացի մասին:

Թանգարանում իրականացվող ցուցադրությունների ծավալների շարունակական ընդլայնման և որակական բարելավման նպատակով 1984 թ. ստեղծվեցին նաև Թանգարանային ցուցադրությունների գիտական մշակման, իսկ 1987 թվականից Արտաթանգարանային և շրջիկ ցուցահանդեսի սեկտորները (մինչև 1990 թ.):

1987 թ.՝ Դվինի պեղումների 50-ամյակի շրջանակում, թանգարանում բացվեց «Դվինի նյութական մշակույթը» ժամանակավոր ցուցադրությունը, որտեղ ներկայացվեց 315 առարկա: Դրանց զգալի մասը հանրությանը ներկայացվում էր առաջին անգամ: Ցուցադրության նպատակն էր ընդգծել Դվինի՝ որպես միջնադարյան Հայաստանի կարևորագույն քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնի դերը, ինչպես նաև հանրահռչակել վերջին տասնամյակների ընթացքում իրականացված պեղումների գիտական արդյունքները:

1988 թ. սկսվեց Արցախյան շարժումը՝ որպես խաղաղ պահանջ՝ վերամիավորելու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) Հայաստանին: Այն դարձավ ազգային զարթոնքի, ինքնորոշման իրավունքի պաշտպանության կարևոր դրսևորում: Այդ համատեքստում արժանահիշատակ է 1988 թվականի հոկտեմբերին բացված «Արցախ. կիրառական արվեստ» ցուցադրությունը, որի շրջանակում ներկայացվել է 415 առարկա՝ հնագիտական, ազգագրական, վավերագրական՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակից մինչև 20-րդ դարի սկիզբ (Հաշվետվություն 1988, 9):

1990 թվականին թանգարանի ճարտարապետության բաժնի և ցուցադրությունների գիտական մշակման սեկտորի միավորման արդյունքում ստեղծվեց ճարտարապետության պատմության և ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպման բաժինը: Այս քայլը նպատակ ուներ ավելի արդյունավետ և համակարգված մոտեցում հանդես բերել ցուցադրությունների կազմակերպման գործում:

Բաժնի անմիջական մասնակցությամբ 1991 թ. թանգարանում կազմակերպվեց «Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և հնագիտությունը» ժամանակավոր ցուցադրությունը, որը նվիրված էր Մովսես Խորենացու հանրահայտ երկի՝ «Հայոց պատմության» 1500-ամյակին: Այս ցուցադրությունը կարևոր գիտական փորձ էր՝ միավորելու հնագիտական նյութ ու պատմագիտական վերլուծությունները, ներկայացնելով Հայաստանի անցյալն ինչպես գրավոր աղբյուրների, այնպես էլ հնագիտական գտածոների միջոցով: 1993 թվականին Հայաստանի պատմության թանգարանում կազմակերպվեց Անիի հնագիտական պեղումների 100-ամյակին նվիրված ցուցահանդես, որն ընդգծեց Անիի պատմական կարևորությունը և նրա հնագիտական ժառանգությունը: Ցուցահանդեսի շրջանակում առաջին անգամ ներկայացվեց Գագիկ Ա թագավորի քանդակը՝ վերականգնված բնօրինակ չափսերով: Քանդակագործ Հ. Գալստյանի կողմից իրականացված վերականգնման աշխատանքը հիմնված էր միայն պահպանված լուսանկարների և գիտական նկարագրությունների վրա (նկ. 4):

1996 թ. թանգարանում բացվեց «Հայաստանը գորգագործության հայրենիք» շարքի ցուցադրություններից մեկը՝ «Վիշապագորգեր» խորագրով, որտեղ հնագիտական և ազգագրական բնօրինակ առարկաները ներկայացնում էին հայկական մանածագործության ու գորգագործության ծագումն ու զարգացումը, Հայկական լեռնաշխարհում վիշապի գաղափարի իմաստաբանությունն ու դրա ձևավորման փուլերը՝ սկսած վաղագույն ժամանակներից: Այս ցուցահանդեսը բացառիկ էր ոչ միայն մշակութային նշանակությամբ, այլև իր քաղաքական ենթատեքստով: Այն դարձավ պատասխան Արևմտյան և հատկապես անգլիական մամուլում հայտնված հոդվածներին, որոնցում փորձ էր արվում հայկական գորգարվեստը վերագրել այլ մշակույթների՝ մասնավորապես թուրքական և ադրբեջանական մշակույթին: «Ազգ» թերթի հովանավորությամբ հրատարակվեց ցուցահանդեսի բուկլետը, ազդագիրը և հրավիրատոմսը, որոնք նպաստեցին ցուցադրության առավել հանրայնացմանը:

1996 թվականին Ֆրանսիայի Նանտ քաղաքի Դոբրի թանգարանում բացվեց «Հայաստան. Ակունքներից մինչև 4-րդ դար» ցուցահանդեսը, որն իրականացվել էր Հայաստանում Քրիստոնեության որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի հոբելյանական միջոցառումներին ընդառաջ: Ցուցահանդեսում թանգարանի հավաքածուից ներկայացված էին շուրջ 300 բնօրինակ առարկաներ, որոնք բացահայտում էին Հայկական լեռնաշխարհում հնագույն քաղաքակրթության և առաջին պետական միավորումների առաջացումը, ինչպես նաև Հայաստանում նախաքրիստոնեական բարձր մշակույթն ու դրա փոխառնչությունները հին աշխարհի այլ մշակույթների հետ:

Նույն տարում, Ֆրանսիայի ազգային գրադարանում բացվեց «Հայաստան. 3000 տարվա քաղաքակրթություն Արևմուտքի Արևելքի միջև», որը նպատակ ուներ ներկայացնել Հայաստանի հարուստ պատմությունն ու մշակութային ժառանգությունը՝ ընդգծելով նրա դերը Արևելքի և Արևմուտքի միջև որպես կամուրջ: Ցուցահանդեսում ներկայացված էին նմուշներ Հայաստանի պատմության թանգարանից և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից:

1980-ական թվականներից սկսած Հայաստանի պատմության թանգարանում սկսեցին կազմակերպվել «Թանգարանի նոր ձեռքբերումները» խորագրով ցուցահանդեսներ, որոնք ներկայացվում էին միջինում հնգամյա պարբերականությամբ: Այս ցուցահանդեսների նպատակն էր հանրությանը ներկայացնել հաշվետու տարիների ընթացքում թանգարանի հավաքածուի հարստացման գործընթացը, որն իրականացվում էր հնագիտական պեղումների, ազգագրական գիտարշավների, նվիրատվությունների և այլ միջոցներով:

1998 թվականին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու հոբելյանական միջոցառումներին ընդառաջ՝ Հայաստանի պատմության թանգարանի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի և Աթենքի Բենակի թանգարանի համագործակցությամբ Հունաստանի մայրաքաղաք Աթենքում՝ Մեգրանո սրահում, բացվեց «Հայաստանի գանձերը» խորագրով մեծածավալ ցուցադրությունը. ներկայացված 200 ցուցանմուշներից 129-ը Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուից էին, որոնք Հայ-բյուզանդական

և հայ-հունական մշակույթների փոխառնչությունների համայնապատկերում ներկայացնում էին հայկական մշակույթի առանձնահատկությունները:

Նույն թվականին թանգարանը ևս 2 միջազգային մեծածավալ ցուցահանդես կազմակերպեց Գերմանիայում՝ Բոնն, Հալլե, Վիտենբերգ քաղաքներում՝ «Հայկական հին ձեռագրեր և եկեղեցական իրեր» խորագրով և Ֆրանսիայի Լիոն քաղաքում՝ «Հայաստանը ակունքերից մինչև 4-րդ դար» խորագրով:

2001 թվականին թանգարանը կազմակերպեց «Գանձեր տապանից» խորագրով ցուցահանդեսը Լոնդոնի Բրիտանական թանգարանում, որտեղ ներկայացվել է 4–15-րդ դարերի հայ ճարտարապետական քանդակարվեստի և քրիստոնեական կոթողային հուշարձաններ: Նույն թավականին Նիդերլանդների Լեյդեն քաղաքի Հնությունների պետական թանգարանում բացվեց «Հայաստանի լեռներում թաքնված գանձեր» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էր Հայաստանի նախաքրիստոնեական մշակույթը 3-րդ հազ. վերջից մինչև 1-ին հազ. կեսերը:

2002 թվականից սկսվեց թանգարանի վերանորոգման աշխատանքների գործընթացը, որի ընթացքում, սակայն, կազմակերպվել են թեմատիկ ցուցահանդեսներ: 2004 թվականից մեկնարկել են թանգարանի մշտական ցուցադրության կազմակերպման աշխատանքները, որոնք նպատակ ունեին թարմացնելու և նոր գիտական մոտեցումներով վերաձևավորելու թանգարանի հիմնական ցուցադրությունը:

Հիմքում ունենալով տեղական և միջազգային ցուցադրությունների կազմակերպման հարուստ փորձը՝ 2005 թ. թանգարանի ճարտարապետության պատմության և ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպման բաժինը վերանվանվեց ցուցադրությունների բաժին: Այս փոփոխությունը նպատակ ուներ նպաստելու ցուցադրությունների կազմակերպման ավելի պրոֆեսիոնալ մոտեցումների զարգացմանը, ինչպես նաև թանգարանի ցուցադրական գործունեության արդյունավետության բարելավմանը:

2007 թվականին, մինչ թանգարանի ներսում շարունակվում էին մշտական ցուցադրության կազմակերպման աշխատանքները, թանգարանը ակտիվ աշխատում էր միջազգային ցուցահանդեսների կազմակերպման ուղղությամբ: Միայն նշյալ տարվա ընթացքում Ֆրանսիայում Հայաստանի օրերի շրջանակում կազմակերպվեց 9 ցուցահանդես Փարիզում, Լիոնում, Մարսելում և այլ քաղաքներում: Հիշատակության է արժանի «Սուրբ Հայաստան» մեծամասշտաբ ցուցահանդեսը՝ Լուվրի թանգարանում: Ցուցահանդեսը ներկայացրել է 4–18-րդ դարերի հայկական մշակույթի և արվեստի ավելի քան 200 գլուխգործոցներ, այդ թվում՝ 32 խաչքար Հայաստանից և Արցախից (նկ. 5): Ցուցադրությունը Լուվրի թանգարանում ներկայացվելուց հետո ցուցադրվեց նաև Հայաստանի պատմության թանգարանում՝ «Սուրբ Հայաստան՝ վերադարձ տուն» խորագրով:

2008 թվականին Էրմիտաժում բացվեց «Արարատի ստորոտին» ցուցադրությունը՝ ի նշան հարգանքի ականավոր հնագետ, Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկու 100-ամյակի, իսկ Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում բացվեց մեկ այլ մեծածավալ ցուցադրություն՝ «Բաբելոնից անդին. Արվեստը և միջազգային փոխանակումները» խորագրով:

2012 թվականին Հայ տպագրության 500-ամյակի միջոցառումների շրջանակում Հայաստանի պատմության թանգարանում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի և Հայաստանի ազգային գրադարանի հետ համատեղ բացվեց «Գրի հավերժությունը» խորագրով ժամանակավոր ցուցադրությունը: Ցուցադրությունը ոչ միայն ընդգծեց հայ տպագրության պատմական նշանակությունը, այլև ընդգրկուն կերպով ներկայացրեց այն ազդեցությունը, որը հայ գիրն ու տպագիր ժառանգությունը ունեցել են մշակութային, հոգևոր և գիտական կյանքի վրա (նկ. 6):

2015 թվականին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի շրջանակում թանգարանը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի և Էջմիածնի հետ համատեղ Հռոմի Վիտտորիանո ցուցասրահում բացեց «Հայաստան. Տապանի ժողովուրդ» ցուցահանդեսը: Մեկ տարի անց Մոսկվայի պետական թանգարանում բացվեց «Հայաստան. Լինելիության առասպելը» խորագրով ցուցահանդեսը, որին ներկայացվեց 161 առարկա Հայաստանի պատմության թանգարանից, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից: Նույն թվականին Աթենքի «Բյուզանդական և քրիստոնեական» թանգարանում բացվեց «Արարատի ոգին» ցուցադրությունը՝ 107 բացառիկ նմուշներով ներկայացնելով հայ ժողովրդի անցյալը վաղնջական ժամանակներից մինչև 20-րդ դար:

Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական մշակութային միջոցառումների շրջանակներում 2018 թվականին թանգարանում բացվեց «Մայիսյան հերոսամարտեր. Հայաստանի Առաջին Հանրապետությունը. հետահայաց 100 տարի» ցուցահանդեսը: Հայ ժողովրդի պատմության նորագույն այդ ժամանակաշրջանը ներկայացվեց Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուներում պահվող 68 նմուշներով, որոնք տարբեր կողմերից լուսաբանեցին այդ ժամանակաշրջանի հիմնական իրադարձությունները, մարտական գործողությունները, ազգային հերոսներին ու պետության ձևավորման գործընթացը:

Նույն տարում Լոնդոնի Բրիտանական թանգարանում բացված «Ես եմ Աշուրբանիպալը՝ Աշխարհի արքա, Ասորեստանի արքա» խորագիրը կրող ցուցահանդեսում Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուից ներկայացվեցին ուրարտական արվեստի 10 բացառիկ նմուշներ:

2019 թվականին Հայաստանի պատմության թանգարանը մասնակցել է Չինաստանի ազգային թանգարանում բացված «Ասիական քաղաքակրթությունների համատեղ ցուցահանդեսին». թանգարանը ներկայացել էր առանձին ցուցադրությամբ՝ «Հայկական խեցեգործության բացառիկ նմուշներ մետաքսի ճանապարհի հայկական հանգրվաններից (Ք. ա. 1-ին հազարամյակից մինչև Ք. հ. 13-րդ դար)» խորագրով: Ցուցադրվել են Հայաստանի հնագույն մայրաքաղաքներ Էրեբունի-Երևանից, Դվինից, Անիից պեղված նյութերը:

2020-ից թանգարանում մեկնարկեցին օդափոխության համակարգի տեղադրման աշխատանքները, ինչը պայմանավորված էր թանգարանի ժամանակակից պահանջներին համահունչ ենթակառուցվածքների ձևավորմամբ: Վերանորոգման ընթացքում ամբողջապես հավաքվեց մշտական ցուցադրությունը, սա-

կայն թանգարանը շարունակեց իր գիտամշակութային գործունեությունը՝ կազմակերպելով թեմատիկ ցուցահանդեսներ, որոնք հնարավորություն են ընձեռել ներկայացնելու թանգարանի հավաքածուի արժեքավոր նմուշներն ու հայ մշակութային ժառանգության տարբեր շերտերը:

2021 թվականին թանգարանը, չունենալով իր շենքի ներսում ցուցադրական տարածքներ, «Դրվագներ ինքնության. տարազ» խորագրով ժամանակավոր ցուցադրությունը բացեց Արտաքին գործոց նախարարության նախկին շենքում՝ այդպիսով ազդարարելով «Դրվագներ ինքնության» ցուցադրության շարքի մեկնարկը: Ցուցադրությունն ընդգծում էր հայկական տարազի մշակույթի կարևորությունն ու խորհրդաբանությունը՝ որպես հայ ժողովրդի ինքնության կարևոր բաղադրիչ (նկ. 7): Նույն շարքի շրջանակում 2022 թվականին շարունակվել է ցուցադրությունների թեմատիկ առաջխաղացումը, և բացվել են «Դրվագներ ինքնության. զարդ» և «Դրվագներ ինքնության. գորգ» ցուցադրությունները: Այս ցուցահանդեսները բացահայտեցին հայկական ավանդական մշակույթի տարբեր դրսևորումները՝ ներկայացնելով ոչ միայն դրանց գեղագիտական արժեքները, այլև խորհրդաբանական տարրերը, որոնք ձևավորել են հայ ժողովրդի ինքնությունը:

2021 թվականի սեպտեմբերի 28-ին՝ Հայաստանի պատմության թանգարանի նախաձեռնությամբ, շենքի կամարաշարի ներքո բացվեց ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված պաստառների ցուցադրությունը՝ ներկայացնելով Հայկական լեռնաշխարհի տարածքում ձևավորված վաղ պետական կազմավորումներից սկսած մինչև Հայաստանի 3-րդ հանրապետության այն խորհրդանիշները, որոնք հավաստել են բարձրագույն իշխանությունը: Ձևավորելով ցուցադրության նոր ավանդույթ՝ 2022-ին թանգարանի կամարաշարի ներքո բացվեց «Բանակի ակունքներում», 2023-ին՝ «Արցախյան շարժում-35», 2024-ին՝ «Ներսիսյան դպրոց-200» ժամանակավոր պաստառային ցուցահանդեսները: Այս ցուցադրությունների նպատակն էր ներկայացնել և հանրայնացնել Հայաստանի պատմության կարևորագույն իրադարձությունները, ազգային ինքնության ձևավորման գործընթացները, ինչպես նաև ընդգծել պատմական ժառանգության նշանակությունը ժամանակակից հայկական պետականության զարգացման համատեքստում:

2022 թվականին թանգարանը հանդես եկավ մեծածավալ միջազգային ցուցադրությամբ, որը կազմակերպվեց Նիդերլանդների թագավորության Դրենց թանգարանում՝ «Արարատի հմայքի ներքո. գանձեր հին Հայաստանից» խորագրի ներքո՝ ներկայացնելով թանգարանի հնագիտական հավաքածուից 160 բացառիկ նմուշ: Ցուցադրության նպատակն էր ներկայացնել Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթության հարուստ ժառանգությունը՝ ընդգծելով Հայաստանի դերը համաշխարհային մշակութային և պատմական զարգացումներում (Հաշվետվություն 2022, 5) (նկ. 8):

Նույն տարում, սեպտեմբերի 9-ին Հայաստանի պատմության թանգարանում տրվեց մշտական ցուցադրության վերաբացման մեկնարկը՝ «Հնագույն մարդու հետքերով. քարի դար» խորագրով ցուցասրահի բացմամբ: Մինչև 2024 թվականը վերբացվեցին «Իրականության և առասպելների միջով. բրոնզի դար», «Երկաթի

դար», «Աստվածների թագավորությունը. Ուրարտու/Բիաինիլի», «Ուժ և գեղեցկություն. անտիկ Հայաստան» , «Քրիստոնյա Հայաստան. 4–9-րդ դարեր», «Անի. Բագրատունիների տիեզերահռչակ մայրաքաղաք», «Հայաստանը 10–14-րդ դարերում», «Կիլիկիոյ Հայոց թագավորութիւն. կարողութեամբն Աստուծոյ», «Հայաստանը հնագույն քարտեզներում» ցուցասրահները:

Թանգարանի վերաբացված մշտական ցուցադրությունները հանրությանը ներկայացվեցին ամբողջովին նորացված սրահներում՝ նոր հայեցակարգով: Ցուցադրությունների մեջ տեղ գտան նաև վերջին տարիներին թանգարանի կողմից ձեռք բերված նոր նմուշներից, ինչպես նաև կիրառվեցին նորագույն տեխնոլոգիաներ: Գրեթե բոլոր սրահներում այցելուները հնարավորություն ունեն հատուկ տվյալ ցուցադրության համար պատրաստված կարճամետրաժ անիմացիաների միջոցով ծանոթանալու առանցքային նմուշներին կամ պատմական իրադարձության խորքային պատմությանը: Նորաբաց ցուցասրահներում նաև մի շարք առանցքային նմուշների կողքին տեղադրվեցին դրանց կրկնօրինակները, որոնք հնարավորություն են ընձեռնում վատ տեսնող այցելուներին շոշափելով պատկերացում կազմել ցուցանմուշի մասին, ինչպես օրինակ՝ Քարաշամբից հայտնաբերված գավաթի, քարեդարյա գործիքների, Արենիից հայտնաբերված ամենահին կոշիկի կրկնօրինակները:

Ցուցադրությունները ժամանակակից չափորոշիչներին համապատասխան կազմակերպելու նպատակով կիրառվեցին լուսավորության հատուկ համակարգեր, տպագրական նոր տեխնոլոգիաներ, ինչպես նաև ջերմա-խոնավային հատուկ ռեժիմ ունեցող ցուցափեղկեր՝ առանցքային նմուշների համար:

2023 թվականին Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանում մեծ հանդիսավորությամբ բացվեց «Ուրարտուի թագավորությունը. հին Հայաստանի ժառանգությունը. Ուրաշտու – Հարմինուա – Արմինա» խորագրով մեծածավալ ցուցահանդեսը, որը հայկական և ռուսական մի շարք առաջատար թանգարաններից ընտրված շուրջ 400 ցուցանմուշներով ներկայացնում է մինչուրարտական, ուրարտական և հետուրարտական Հայաստանի ժառանգությունը, ինչպես նաև դրա ուսումնասիրման պատմությունը: Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուից ցուցադրվեցին շուրջ 50 ուշագրավ ցուցանմուշներ՝ ընդգծելով Ուրարտուի թագավորության և դրա հետագա ժառանգության կարևորությունը Հայաստանի պատմության ու մշակույթի ներկայացման համատեքստում (Հաշվետվություն 2023, 10):

Նույն տարում Վենետիկի հեղինակավոր թանգարաններից մեկում՝ Դոժերի պալատում, բացվեց «Մարկո Պոլոյի աշխարհները. 13-րդ դարի վենետիկյան վաճառականի ճանապարհորդությունը» խորագրով մեծածավալ միջազգային ցուցահանդեսը: Ցուցահանդեսի հայկական ցուցասրահում ներկայացված են եղել 32 ուշագրավ ցուցանմուշներ Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուներից:

2023 թվականին Բրիտանական թանգարանում ցուցադրվեցին Հայաստանի պատմության թանգարանի երեք բացառիկ ցուցանմուշներ, որոնք «Շքեղություն և ուժ. Պարսկաստանից Հունաստան» խորագրի ներքո տարբեր երկր-

ներից ներկայացված այլ նմուշների հետ պատմում էին Ք. ա. 6–1-ին դդ. Աքեմենյան կայսրությունից մինչ հելլենիստական ժամանակների շքեղության, իշխանական խորհրդանիշների, դրանց փոխակերպումների, ինչպես նաև քաղաքական ու պատմամշակութային նշանակության մասին (Հաշվետվություն 2023, 8)։ Այս ցուցադրությունը նախադեպ ստեղծեց միջազգային խոշոր համագործակցությունների համար՝ բարձրարժեք նմուշների փոխառության և Հայաստանի մշակութային ժառանգության նորովի ներկայացման տեսանկյունից։ Այն նախահիմք դարձավ մեկ տարի անց Հայաստանի պատմության թանգարանում կազմակերպված պատմական ու բացառիկ ցուցադրության՝ «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրով, որի շրջանակում առաջին անգամ Հայաստան բերվեց Բրիտանական թանգարանում պահվող Ք. ա. 2–1-ին դդ. թվագրվող Անահիտ աստվածուհու արձանից պահպանված բրոնզե գլուխն ու ձեռքը և համադրվեց Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուներից վեց տասնյակ ցուցանմուշների հետ՝ ներկայացնելով Մայր աստվածության գաղափարը՝ հեթանոսությունից մինչև քրիստոնեություն (նկ. 9)։

Տարեմուտը նշանավորվեց մեկ այլ միջազգային ցուցադրությամբ՝ «Երեկ և այսօր. Ժակ դը Մորգանի հետքերով» խորագրով, որն իրականացվեց Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանի հետ համատեղ։ Ցուցահանդեսի շրջանակներում առաջին անգամ Ֆրանսիայից Հայաստան բերվեցին և Հայաստանի պատմության թանգարանում ցուցադրվեցին ֆրանսիացի անվանի հնագետ Ժակ դը Մորգանի կողմից Ախթալայում 19-րդ դ. 80-ական թթ. պեղված բրոնզեդարյան և երկաթեդարյան հինգ ուշագրավ ցուցանմուշներ, որոնք ներկայացված են դեռ 1990-ական թթ. հայ-ֆրանսիական արշավախմբերի կողմից տարբեր հնավայրերում հայտնաբերված և ՀՀ թանգարաններում պահվող ավելի քան վեց տասնյակ հնագիտական առարկաների համադրությամբ։

Հայաստանի պատմության թանգարանի 105-ամյակի հոբելյանը ևս նշանավորվեց թանգարանի ավելի քան մեկդարյա պատմությունը ներկայացնող ցուցադրությամբ, որը կազմակերպվեց թանգարանի նախասրահում։

Ցուցադրությունն ընդգրկում է արխիվային լուսանկարներ, փաստաթղթեր և թանգարանի հիմնադիր հավաքածուից ընտրված բացառիկ նմուշներ՝ ներառյալ հնագիտական, ազգագրական, դրամագիտական և նորագույն պատմության հավաքածուներից ընտրված առարկաներ։

Հայաստանի պատմության թանգարանի 105-ամյա պատմության շրջանակում ցուցադրական աշխատանքների այս համեստ ներկայացումը, անշուշտ չի արտացոլում գործունեության ողջ ծավալն ու աշխարհագրությունը, սակայն հնարավորություն է տալիս համապարփակ պատկերացում կազմելու թանգարանի ցուցադրական գործունեության մասին։ Հայաստանի պատմության թանգարանը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, շարունակաբար զարգացնում է ցուցադրական աշխատանքները՝ ապահովելով ազգային ժառանգության պահպանումը, ուսումնասիրումը և հանրայնացումը թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում։

Փաստենք նաև, որ թանգարանի կողմից իրականացվող դասական ցուցադրությունների կողքին վերջին տարիներին մեծ թափ ստացան թվային հարթակներում կազմակերպվող ցուցադրությունները։

2021 թվականից Հայաստանի պատմության թանգարանում մեկնարկեց կարևոր ավանդույթ՝ ժամանակավոր ցուցադրությունների փակումից հետո դրանց 360° ձևաչափով առցանց տարբերակների հասանելիություն ապահովելը: Այս նախաձեռնությունը նպատակ ունի ընդլայնել ցուցադրությունների հասանելիությունը՝ հնարավորություն տալով վայելելու ցուցադրությունները առանց ժամանակային և տարածքային սահմանափակումների և վիրտուալ շրջայց կատարել ցուցադրական տարածքում:

Առաջին ցուցադրությունը, որը ներկայացվեց 360° ձևաչափով, դարձավ «Հողի գաղտնիքը. Արտաշատը մշակույթների խաչմերուկում» ժամանակավոր ցուցադրությունը: Այնուհետև նույն ձևաչափով ներկայացվեցին նաև այլ ցուցադրություններ՝ «Ջենք. պայքար և մշակույթ», «Դրվագներ ինքնության. զարդ», «Ինքնության մասունքներ կորուսյալ Գարդմանից, Շիրվանից և Նախիջևանից», «Լճաշեն. ջրասույզ գանձարան»: Նախաձեռնությունը շարունակական է և համալրվում է իրականացվող ցուցադրություններով:

Վերոնշյալ 360° ձևաչափից զատ, 2023 թվականից Հայաստանի պատմության թանգարանը սկսեց իրականացնել նաև առցանց ցուցահանդեսներ, որոնք նպատակ ունեն ապահովելու ցուցադրությունների հասանելիությունը ավելի լայն լսարանի համար և ընձեռել հնարավորություն՝ առավել խորքային ուսումնասիրություններ իրականացնելու: Թանգարանի կայքէջում այս ձևաչափով հասանելի են մի շարք կարևոր ցուցադրություններ՝ «Արցախի գանձերը», «Բանակի ակունքներում», «Ղարաբաղյան շարժում-35» և «Հավերժի ճամփորդներ», որոնք ներկայացնում են հայ ժողովրդի պատմության կարևոր դրվագներ:

Ամփոփելով, կարող ենք փաստել, որ իր 105 ամյա պատմության ընթացքում թանգարանը մշտապես կատարելագործել է ցուցադրական գործունեությունը՝ դարձնելով այն կարևոր միջոց հայ ժողովրդի պատմության և մշակութային ժառանգության ներկայացման ու հանրահռչակման գործում:

Եզրակացություն

Իր հիմնադրման օրից Հայաստանի պատմության թանգարանը դարձել է մեր ժողովրդի պատմական և մշակութային ժառանգության հանգրվանը: Այն ոչ միայն ներկայացնում է հայ ժողովրդի անցած ճանապարհը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև ժամանակակից շրջանը, այլև հանդիսանում է կարևոր հանգույց անցյալի և ապագայի միջև:

Թանգարանի կողմից կազմակերպված մշտական և հարյուրավոր ժամանակավոր ցուցադրությունները ոչ միայն պատմական փաստերի ներկայացման միջոց են, այլև նշանակալի կրթական գործիքներ, որոնք նպաստում են մեր մշակույթի և պատմության խորքային ճանաչմանը և հանրայնացմանը: Դասական ցուցադրություններից մինչև ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, տեղական ցուցահանդեսներից մինչև միջազգային նախագծեր… Հայաստանի պատմության թանգարանի նպատակն է եղել ներկայացնել մշակութային ժառանգությունը, նպաստել հասարակության տարբեր խմբերի պատմական գիտելիքների խորացմանը, իր արժանի տեղն ամրապնդել համաշխարհային մշակութային դիսկուրսում՝ ցույց տալով հայ մշակույթի բազմազանությունն ու հարուստ ժառանգությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐՔ, 1927–2002 ԹԹ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐՔ, 2003–2019 ԹԹ.:

ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1942–1970 ԹԹ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ և ՎԻՃ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԻ և ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, 1963–2002 ԹԹ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 2003–2024 ԹԹ.:

Գրականություն

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1974 – Ղաֆադարյան Կ., Սովետական Հայաստանի առաջին թանգարանը, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, 1974, 12, 37–47:

ՈՒՂԵՑՈՒՅՑ 1961 – *Ուղեցույց, Հայաստանի պետական պատմական թանգարան*, Երևան, 1961:

Arusyak Ghazaryan
History Museum of Armenia
ghazaryana.historymuseum@gmail.com

HISTORY MUSEUM OF ARMENIA: A CENTURIES-OLD TRADITION OF CULTURAL TREASURE EXHIBITION

Keywords: History Museum of Armenia, permanent exhibitions, temporary exhibitions, traveling exhibitions, architecture department, exhibition department

Throughout its 105-year history, the History Museum of Armenia has remained true to its primary mission of collecting, preserving, studying, exhibiting and popularising the history and cultural heritage of the Armenian people.

In the early days of the Museum, it was important not only to build up the collections, but also to make them accessible to the public. For this reason, the article briefly discusses both the permanent and temporary exhibitions that have been held from the Museum's foundation to the present day, highlighting those that have had an impact on the portrayal of important historical events and periods and have played a key role in educating society and strengthening national identity.

The article aims to summarise the evolution of the exhibitions organised by the History Museum of Armenia, highlighting the crucial role that the Museum has played and continues to play in the preservation and popularisation of the culture, heritage and history of the Armenian people.

Арусяк Казарян
Музей Истории Армении
ghazaryana.historymuseum@gmail.com

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ: ВЕКОВЫЕ ТРАДИЦИИ ПОКАЗА КУЛЬТУРНЫХ СОКРОВИЩ

Ключевые слова: Музей истории Армении, постоянные экспозиции, временные выставки, передвижные выставки, отдел архитектуры, отдел экспозиций

На протяжении 105-летней истории своей деятельности Музей истории Армении, оставаясь верным своей основной миссии, постоянно собирал, сохранял, исследовал, выставлял и популяризировал историю и культурное наследие армянского народа. У истоков своего основания наряду с пополнением коллекций для музея особенно важной стала возможность доведения их до сведения общественности. Поэтому в статье было кратко рассмотрено как постоянные, так и временные выставки, проведенные со дня основания музея по сей день, выделив, в частности, те выставки, которые оказали влияние на освещение важных исторических событий и периодов и имели ключевое значение в просвещении общества и укреплении национальной идентичности. Цель статьи – объединить развитие выставок, организованных Музеем истории Армении, подчеркнув ту важнейшую роль, которую музей играл и играет в сохранении и популяризации истории, культуры и наследия армянского народа.